Սերգեյ Դովլաթով

Կոմպրոմիսներ

Կոմպրոմիս իններորդ

(«Սովետսկայա Էստոնիա»: Հուլիս: 1976թ .)

«ԱՄԵՆԱԴԺՎԱՐ ՎԱՋՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ: Տիյնա Կարուն մեծացել է համերաշխ ընտանիքում, ոսկե մեդալով է ավարտել դպրոցը, եղել է ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, զբաղվել է սպորտով: Այստեղ հարկ է առանձնացնել մի հատկանշական մանրամասն: Թեթեւ ատլետիկայի բազմաթիվ մարզաձեւերից նա գերադասում էր 400 մետր վազքատարածությունը, որը, մասնագետների կարծիքով, ամենաաշխատատարն է, պահանջում է արագության ու դիմացկունության, ուժերի լարման ու հաղթելու կամքի համադրություն: Համառություն, հետեւողականություն, ասկետիկ ռեժիմ, սրանք են Տիյնայի կենսագրությունը պայմանավորած գործոնները, որոնց շնորհիվ նա միշտ իրականացրել է իր առջեւ դրած նպատակները: Ավարտելով դպրոցը, Տիյնան ընդունվում է ՏՊՀ-ի քիմիական բաժանմունքը, մասնակցում է ՈՒԳԸ-ի աշխատանքներին, հաճույքով կատարում կոմերիտական հանձնարարությունները: Վերջին կուրսում դառնում է ՍՄԿԿ անդամ: Այնուհետեւ Տիյնան ԷՍՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի ասպիրանտ է: Որպես մասնագետ-քիմիկոսի, Տիյնային հետաքրքրում է մարդու օրգանիզմի վրա քաղցկեղածին նյութերի ներգործության մեխանիզմը: Դիսերտացիան գրեթե պատրաստ է:

Տիյնան իր առջեւ դնում է բարձր ու իրական նպատակներ: Նայելով նրան հավատում ես, որ նա հաջողությամբ կհաղթահարի իր ամենադժվար վազքատարածությունը»:

Տիյնա Կարուի հետ ընդհանուր ծանոթներ ունեինք: Հետաքրքիր, ոչ հիմար կին էր, երիտասարդ գիտնական: Նրա մասին մի փոքրիկ ակնարկ պատրաստեցի: Երբեմն հանդիպում էինք գիտական տարբեր միջոցառումներին կամ ընդհանուր ծանոթների տներում: Մի օր զանգում է .

Ազա՞տ ես: Հետդ խոսելիք ունեմ:

Մտանք «Ռայա» սրճարանը: Ջին պատվիրեցի: Ասաց .

–Չորս տարի է ամուսնացած եմ: Մինչեւ հիմա ամեն ինչ լավ էր: Ամռանը Ռադին Մոսկվա էր գնացել: Հետո վերադարձավ: Դրանից հետո սկսվեց…

՞

Տարօրինակ բաներ են կատարվում: Նա ուզում է… Ոնց քեզ բացատրեմ… Օտար ենք դարձել…

Կենտրոնացա ու հստակ հարցրի .

Սեռակա՞ն առումով:

Հենց սեռական:

Ե՞ս ինչ կարող եմ անել:

Ուզում ես ասել, ինչու եմ քե՞զ դիմում: Դու իմ ճանաչած միակ անբարոյական մարդն ես: Ես էլ որոշեցի քեզ հետ խորհրդակցել:

Չեմ հասկանում:

Քննարկել իրավիճակը:

Գիտես ինչ, ես նույնիսկ տղամարդկանց հետ այդ թեմաները չեմ քննարկում: Բայց ընկերս մի գիրք ունի՝ «Սեքսի տեխնոլոգիան»: Կբերեմ, եթե ուզում ես: Կարճ ժամանակով: Դա նրա սեղանի գիրքն է: Ռուսերեն ազատ կարդո՞ւմ ես:

Իհարկե:

Նրան տվեցի «Տեխնոլոգիան»: Հիանալի գիրք է: Բացում ես առաջին էջը, գրված է՝ «Մուտք»: Արդեն ծիծաղելի է: Բաժիններից մեկը սկսվում է այսպես . «Մեծ փորով զուգընկերներին առաջարկում ենք 7-րդ դիրքը»: Մարդասեր հեղինակը ուշադրություն է տրամադրել անգամ այնպիսի արգահատելի էակների ինչպիսիք մեծ փորով զուգընկերներն են… Գիրքը վերցրեց: Մեկ շաբաթից վերադարձրեց:

Ամեն ինչ հասկանալի՞ էր:

Բացի մի բառից՝ «անշտապ»:

Բացատրեցի, թե ինչ է նշանակում «անշտապ»:

Հիմա ուզում եմ այդ ամենը կիրառել գործնականում:

Օրհնում եմ քեզ, զավակս:

Բայց ոչ ամուսնուս հետ: Ես պետք է նախ պարապեմ: Ուզում եմ շեշտել, որ այս ամենը ասվում էր առանց դույզն իսկ սեթեւեթանքի, էստոնացիներին հատուկ հիմնավոր ու գործնական ոճով:

Դու անբարոյակա՞ն մարդ ես, հարցրեց:

Ոչ այնքան:

Ուրեմն հրաժարվո՞ւմ ես:

Տիյնա, աղաչեցի: Դա այդպես չի արվում: Մենք լավ ընկերական հարաբերություններ ունենք: Ժամանակ է պետք, չի բացառվում, որ դրանք վերաճեն այլ զգացմունքների…

Ինչքա՞ն:

Ի՞նչը ինչքան:

Ինչքան ժամանակ է պետք:

Տեր Աստված, չգիտեմ… մեկ, երկու ամիս…

Չի ստացվի: Ապրիլին ես թեկնածուական մինիմում եմ հանձնում… Մեկնումեկի հետ ծանոթացրու: Ցանկալի է, որ սեւահեր լինի: Ընկերներիդ մեջ տականքներ չկա՞ն:

Գերակշռում են:

Նստել՝մտածում եմ: Շաբլինսկին, անշուշտ, մեծ վարպետ է, բայց կոպիտ է: Ռոզենշտեյնը ամառանոց է կառուցում՝ հալից ընկած է: Գուլյաեւը շիկահեր է: Միտյա Կլեսկին տրիպեր է վարակվել: Օսկա Չեռնո՞վը: Հարմար է, կարծես: Ամոթխած է, կրքոտ ու սեւահեր: Ժլատ է, բայց ոչինչ: Մի անգամ յոլա կտանի:

Հարցնում եմ Չեռնովին .

Կին շա՞տ ես ունեցել:

Երեսունվեց, չորսն էլ հարցականի տակ:

Ի՞նչ է նշանակում՝ հարցականի տակ:

Հայացքն իջեցրեց .

Տարբեր շեղումներ:

Հարմար է, մտածում եմ: Շարադրեցի գործի էությունը: Օսկան շփոթվեց .

Տեսել եմ նրան մի անգամ: Նույնիսկ դուրս գալիս է: Բայց, ախր, այդպես, գործնական…

Ի՞նչ ես ձեւեր թափում: Դժվա՞ր է:

Ես, այնուամենայնիվ, տղամարդ եմ:

Հրաշալի է, ուրեմն ընդառաջ գնա մարդուն:

Իմ փողով մի շիշ ռոմ առա, հրավիրեցի Տիյնային ու Օսկային: Տիյնան ականջիս ասաց .

Ընկերուհուս հետ պայմանավորվել եմ: Երեք ժամով բնակարանն իմ տրամադրության տակ է:

Խմեցինք, ծխեցինք, Բի-Բի-Սի լսեցինք: Օսկան փորձեց ինտելեկտուալ զրույց բացել .

Կենսունակ, իհարկե, կարող է միայն հետապնդվող կազմակերպությունը լինել…

Տիյնան ընդհատեց նրան .

Հարկավոր է գնալ: Թե չէ ընկերուհիս կվերդառնա:

Գնացին: Առավոտյան Տիյնան զանգում է .

Ո՞նց էր:

Ինձ ուղեկցեց ու գնաց: Զանգում եմ Չեռնովին .

Խիղճ ունե՞ս:

Չի ստացվում, կհավատա՞ս: Մի տեսակ չեմ կարողանում…

Դու էլ քեզ տղամա՞րդ ես համարում: Օսկան ընդվզեց .

Իմ ունեցած կանայք ավելի շատ են, քան քո կերած կոտլետները: Բայց այդպիսի կին առաջին անգամ եմ հանդիպում: Ամենազարմանալին այն է, որ դուրս գալիս է:

Նորից հրավիրեցի: Դրեցի ռոմի կիսատ մնացած շիշը: Գնացին: Տիյնան զանգում է .

Գրողը տանի ընկերոջդ:

Մի՞թե, ասում եմ, նորից դասալքել է:

Նստեցինք մեքենա: Փողը մթության մեջ տվեց: Մեկ ռուբլու փոխարեն տասանոց: Հետո տրամադրությանն ահավոր ընկավ: Ոտքով գնաց տուն… Ես տեսա, որ տասանոց է տալիս: Մտածեցի, թե Կովկասում այդպես է ընդունված: Թե ուզում է շլացնել ինձ: Օսկան վրացի է, չէ՞:

Օսկան հրեա է: Նրա իսկական ազգանունը, եթե ուզում ես իմանալ, Մալկիել է:

Նորից զանգում եմ Օսկային:

Օսկա, մարդ եղիր:

Հասկանում ես, մոտս տասանոց էր, թաքանոց ու մանր…

Երրորդ անգամ հրավիրեցի:

Լսեք, ասում եմ, այսօր գիշերում եմ խմբագրությունում: Իսկ դուք կմնաք այստեղ: Շնապսը սառնարանում է: Հեռախոսազանգերին մի պատասխանեք: Դուռը դրսից կողպե՞մ, որ Օսկան չճողոպրի:

Չեմ ճողոպրի:

Գնացի խմբագրություն՝ հերթապահելու: Զանգում է Տիյնան .

Մի րոպեով իջիր:

Իջա: Պայուսակից շոկոլադ հանեց ու մի շիշ վիսկի՝ «Լոնգ Ջոն»:

Արի, ասում է, համբուրեմ քեզ: Մի վախեցիր՝ բարեկամաբար…

Համբուրեց:

Չես կարող պատկերացնել, թե որքան շնորհակալ եմ:

Օսկայից շնորհակալ եղիր:

Ես նրա տասը ռուբլին վերադարձրի: Այն, որ վարորդին էր տվել:

Խայտառակություն:

Լավ-լավ: Նա ազնվորեն վաստակեց այդ փողը:

Շիշը գրպանս դրեցի ու գնացի վերջացնելու բարոյական թեմայով հոդվածս: